



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2020 թվականի N 68- Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 488-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2020 թվականի փետրվարի 26-ին ներկայացված N 4 արձանագրությունը

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից 15 /տասնհինգ/ քաղաքացիների սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 1 250 000 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ

27.02.2020

Հ.ԶՈՐԱՆՅԱՆ

X

2020թ. փետրվարի 27
ք.հջևան